ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ՔԱՆԴԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ ժամանակակից քանդակագործ Աշոտ Հարությունյանի կոնցեպտուալ քանդակների տեղադրմանը Երևան քաղաքի Միսաք Մանուշյանի անվան պուրակում ՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ՔԱՆԴԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի նկարիչների միության անդամ, ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր Աշոտ Հարությունյանը մեր ժամանակների առաջատար կոնցեպտուալ քնդակագործներից է՝ առանձնացող նորարարական մտածողությամբ և ինքնատիպ ստեղծագործական մոտեցումներով:

Աշոտ Հարությունյանի ստեղծագործությունները տեղադրված են ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրի մի շարք քաղաքներում: Քանդակները արժանացել են հանրային և մասնագիտական բարձր գնահատականի՝ իրենց ուրույն տեղը զբաղեցնելով հանրային տարածքներում:

Հայաստանի նկարիչների միությունն առաջարկում է թույլատրել Երևանի Միսաք Մանուշյանի անվան պուրակում տեղադրելու հեղինակի 13 խոշորածավալ կոնցեպտուալ աշխատանքները՝ նպաստելով պուրակի գեղարվեստական վերարժևորմանը:

Քանդակների վերացական ձևերն ու գունային լուծումները ներդաշնակորեն կհամադրվեն բնական միջավայրի հետ՝ նպաստելով հանրային տարածքներում ժամանակակից արվեստագետների ճանաչելության բարձրացմանը:

Քանդակների բացումը նախատեսվում է իրականացնել 2026 թվականի մայիսի 16-19-ը ընկած ժամանակահատվածում:

Քանդակների տեղադրման հետ կապված ֆինանսական ծախսերը հոգալու է Հայաստանի նկարիչների միությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի ---------- ---ի
N--- Ա որոշման